Kurtu

Нарине Абгарян

Дальше Жить

Նաստիա Զորզորյան

Կարմիր

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թարգմանությունը ռուսերենից՝
Նարինե Գիժլարյանի

new

ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 821.161.1(=19)-32 Աբգարյան
ԳՄԴ 84(5Հ=411.2)-44
Ա 128

Աբգարյան Նարինե
Ա 128 Ապրել: Պատմվածքների ժողովածու / Ն. Աբգարյան.- Եր.: Newmag, 2025.- 228 էջ:

Նարինե Աբգարյանի «Ապրել» գիրքը 31 պատմվածքների ժողովածու է: Բերդ քաղաքի մարդկանց մասին է, որոնք կրում էին Արցախյան առաջին պատերազմի զրկանքները: Իրենց առօրյայով, ցավերով ու հույսերով ապրող տավուշեցիների պատմություններն են: Գիրքը պատերազմից փրկվածների և նրանց մա-սին է, ովքեր դարձան այդ արհավիրքի զոհը: Հեղինակն ասում է՝ պատերազմի մասին գրելը նշանակում է նայել մահվան աչքերին ու փորձել չփախցնել հայացքը: Չէ՞ որ ինքդ քեզ կդավաճանես, եթե չկարողանաս ուղիղ նայել: Կյանքը մահից արդար է. սա է ճշմարտությունը: Սրան պետք է հավատալ՝ ապրել կարողանալու համար:

ՀՏԴ 821.161.1(=19)-32 Աբգարյան
ԳՄԴ 84(5Հ=411.2)-44

Գլխավոր գործընկեր՝
ARGO Reality

Կոմիտաս 19/1, Երևան, ՀՀ
ar-go.am | info@ar-go.am
+37455200707

ISBN 978-9939-967-90-5
© Narine Abgaryan, 2018
The publication of the book was negotiated through Banke, Goumen & Smirnova literary agency (bgs-agency.com).
Նարինե Աբգարյան «Ապրել» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Banke, Goumen & Smirnova գրական գործակալության հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Նախաբանի փոխարեն. Զանազանը 7
Մեռելոց 10
Ջուգագուլպաները 17
Կապոցը 24
Բաղարջ 31
Մենություն 36
Ապրելը 45
Փախլավա 51
Գուլպան 55
Գորգը 62
Հովիտը 67
Սպասում 74
Ամառը 83
Աղոթքը 90
Վերադարձ 96
Կենացը 100
Խաչքարը 106
Ամպրոպը 114
Սովը 121
Ժանյակները 131
Նախիրը 144
Զբոսանք 155
Ոտնամանը 160
Ընտրություն 169

Սիրտը 177
Լռությունը 183
Ծիծաղը 193
Անմեռուկները 200
Մեղավորություն 208
Փրկությունը 217
Մշուշները 220
Վերջաբանի փոխարեն 225

Նախաբանի փոխարեն. Զանազանը

— Զանազան: Այ Զանազան: Տանձ կուզես:

Զանազանը երկար թարթիչներ ունի ու բաց մանուշակագույն աչքեր: Մազերը խիտ են, պղնձագույն, մի ճերմակ մազ նույնիսկ չունի: Անհնազանդ գանգուրները ոլորվում են քունքի մոտ:

Տանձը նրան եմ մեկնում: Մտացրիվ նայում է, հայացքը չի փախցնում:

— Տանձ վերցրու, Զանազան:

Գլուխն օրորում է:

Զանազանը կարմրագորշ բծերով ձիթապտղագույն մաշկ ունի: Նա արտասովոր է, նրա նմանը չկա:

— Լավ, քեզ ինչ հյուրասիրեմ:

Բերանը ծածկում է ձեռքի ափի հակառակ կողմով. կյանքի գիծը հստակ չէ, կարճ է, ճանապարհի կեսին ընդհատվում է:

— Զանազան:

— Ը՞մ...

— Խոսի՛ր հետս:

Լռում է: Մատները գունատ են, երկար: Ձախ ձեռքի ցուցամատին հասարակ մատանի կա: Կանգնել, ծիծաղելիորեն խաչել է ոտքերը: Կոճին կիսալուսնաձև ճանկռվածք կա:

— Երբ հասցրիր ոտքդ քերծել:

Ուսն է թոթվում: Ցրված, ասես մտքում ժպտում է:

Մարդ ուզում է՝ գրկի նրան, սեղմի կրծքին, բայց չի կարելի: Զանազանը չի սիրում, երբ իրեն դիպչում են:

— Նկարել իմանայի՝ դիմանկարդ կնկարեի:

Նայում է թերահավատորեն: Վերցնում է տանձը՝ փոքր-ինչ տատանվելով:

— Ինձ մի բան ասա, Զանազան:

Գնում է՝ դուռն իր հետևից խնամքով ծածկելով:

Հայացքով մտովի հետևում եմ՝ ոնց է իջնում աստիճաններով. մի սանդղավանդակով, հետո՝ երկրորդով: Շքամուտքի ցրտից դուրս է սահում արևով ողողված բակ:

— Զանազան: Այ Զանազան,– կանչում են երեխաները:

Զանազանը քայլում է առանց շրջվելու: Ծամն ընկած է ուսին, ծայրը կապած է ծիծաղելի ռեզինով:

Պատերազմը նա դիմավորեց մայրացած: Երկունքի ցավերը սկսվեցին ռմբակոծության տակ: Շտապօգնություն կանչել չէր լինի. հեռախոսներն անջատված էին, հարևանների օգնությանն էլ չէր կարող դիմել. ինչո՞ւ մարդկանց ստիպես՝ կյանքները վտանգեն: Մինչև վերջ դիմացավ: Երբ ցավն արդեն անտանելի դարձավ, ամուսնու հետ վեր կացավ, գնաց հիվանդանոց: Արկի բեկորներն ամուսնուն թափանցանց թրատեցին, երեխային չկարողացան փրկել:

— Զանազան: Այ Զանազան,– կանչում են երեխաները:

Զանազանը քայլում է առանց հետ նայելու:

Պառավ սկեսուրի հետ է ապրում:

— Քեզ ո՞ւմ հույսին եմ թողնելու, երբ մեռնեմ,– հեծեծում է սկեսուրը:

Զանազանը հեզահամբույր, անխռով ժպտում է: Նրան տանձ է մեկնում:

— Ը՛մ, ը՛մ, ը՛մ, ը՛մ:

Նա երկար, խիտ թարթիչներ ունի և բաց մանուշակագույն աչքեր: Որևէ մեկը տեսել է բաց մանուշակագույն աչքեր: Ես տեսել եմ: Զանազանի աչքերը:

Մեռելոց

Հինամանց Մետաքսյան առավոտ ծեգին է տնից դուրս գալիս, երբ դեռ աքլորականչն էլ չի եղել: Գյուղական ծիծեռնակների երամը վեր է սլանում նոճու պուրակից, ճախրում բարձունքում՝ արագ լուսացող երկնային կտավին սուր թևերով խազեր քաշելով: Անձայն ընկնում է առաջին թանձր, կենարար ցողը՝ ճամփու դնելով գիշերվան: Ժամանակը շփոթելով՝ ծղրիդը սկսում է իր ծորուն երգը՝ ճրռ-ճրռ-ճրռ...

— Բարի լույս, թշվառական,– մտովի ողջունում է Մետաքսյան:

Ասես նրան լսելով՝ ծղրիդը հոգոցն ընդհատում է ու սկվում:

Այսօր մեռելոց է: Ավանդույթի համաձայն՝ մարդիկ նախ գնում են հոգեհանգստյան արարողության ու նոր միայն այցելում գերեզմաններ: Մետաքսյան էլ մի ժամանակ հետևում էր այդ ավանդույթին, բայց մի օր որոշեց, որ վայել չէ ննջեցյալներին այցելությունը հետաձգել. նրանց ինչի՞ն է պատարագը, երբ է՛ն աշխարհներից մեկում են, որտեղ ամենայն մարդկայինը նշանակություն չունի: Դրա համար էլ, դատում էր նա, ավելի ճիշտ կլինի մեռյալների հիշատակման օրը նախևառաջ գնալ գերեզմանատուն ու դրանից հետո նոր միայն այլ գործերով զբաղվել: Կասկածները փարատելու համար նա որոշեց դիմել քահանայի խորհրդին: Սա, մինչև

վերջ լսելով Մետաքսայային, գլխով հավանության նշան արեց՝ վարվի՛ր, ինչպես ճիշտ ես համարում, եթե քեզ էդպես ավելի հանգիստ ես զգում... Մետաքսյան իրեն այդպես ավելի հանգիստ էր զգում:

Մինչև գերեզմանատուն հասնելը դեռ շատ կա: Գետաքարերով սալարկված ճանապարհը ոլորապտույտ անցնում է տների արանքով, այնուհետև, կտրուկ գալարվելով, մագլցում է բլրի լանջն ի վեր, այնտեղ, ուր, ցածրիկ պարիսպներով իրար սեղմվելով, ավելի ու ավելի են շատանում բերդցիների վերջին ապաստանները: Մարդիկ այնպես են հեռանում, ասես մրցելիս լինեն իրար հետ: Կարծես դեռ վերջերս Ռազմիկի շիրիմն ամենածայրինն էր, այնինչ արդեն երեք շարք շիրիմ անցնելուց հետո հասնում ես նրա շիրիմին: Մետաքսյան նրա գերեզմանի համար այնպիսի տեղ էր ընտրել, որ լայնարձակ տեղանքում լինի ու բաց երկնքի տակ: Խնդրել էր, որ նրան թաղեն լացող ուռենու հովանու տակ՝ ծառի աջ կողմում: Ձախ կողմում, երբ ժամանակը գա, իրեն կթաղեն: Նա արդեն պայմանավորվել է ու նույնիսկ նախապես վճարել գերեզմանափոր Ծատուրին: Վերջինս հրաժարվում էր փողը վերցնելուց, բայց Մետաքսյան պնդել էր. «Հլա մի քեզ նայիր. կաշիդ ու ոսկորդ են մնացել: Մեկ էլ տեսար՝ մահն ինձ տարավ ձմռանը՝ սառնամանիքին: Որտեղի՞ց պիտի ուժ հավաքես, որ սառած հողը փորես: Իսկ էսպես մի ամսան լոբու ապուրի մեջ խոզի խարխզի կլցնես ու վրայից մի բաժակ հոնի օղի կխմես: Հա՛մ քեզ լավ կզգաս, հա՛մ ինձ հաճելի կլինի: Դուրս կգա, որ քեզ պատիվ եմ տալիս»: Ծատուրն առավ փողը, իսկ մյուս գարնանը բունեց Մետաքսյայի դռանը ու բոստանը փորեց: «Բահից ձեռ քաշելու ուժ չունե՞ս»,– կատակեց Մետաքսյան:

«Բարեկամացել եմ հետը»,– ծուռ ժպտաց Ծատուրը՝ ուսով կռթնելով բահի կոթին:

Ու հիմա ամեն տարի էդպես է անում: Գարնանը փխրեցնում է բոստանի հողը, աշնանն էլ օգնում է կարտոֆիլի ու եգիպտացորենի բերքը հավաքելիս: Սկզբում Մետաքսյան հորդորում էր նրան էդպես չանել, բայց հետո համակերպվեց: Դե որ գալիս է, ուրեմն պետք է: Որպես երախտագիտություն՝ Ծատուրի երեխաների համար փոմփոլիկներով գլխարկներ է գործում: Ծատուրը երեք երեխա ունի՝ մեկը մյուսից փոքր: Խայտաբղետ գդակներով ուրախ թզուկների են նման:

Գերեզմանատանն այնպիսի անդորր է, որ լռությունը խախտում է միայն կեռնեխների շողշողուն երգեցողությունը: Մետաքսյան տեղը տեղին կարգի է բերում գերեզմանը: Լվանում և չոր շորով պրտում է ցանկապատը, քաղհանում մոլախոտերն ու ջրում ծաղիկները: Երբ գերեզմանաքարը մաքրում է փոշուց ու անձրևից մնացած բծերից, ծննդյան ու մահվան տարեթվերը նշմարվում են լուռ հանդիմանանքով: Մետաքսյան շունչն ավելի երկար է պահում, քան ներում են ուժերը: Միթե հնարավոր է համակերպվել ջահելների անժամանակ մահվան մտքի հետ: Տասնյոթ տարեկան էր, դեռ կարող էր ապրել ու ապրել:

Մաքրությունն ավարտելուց հետո խնկի հատիկներ է լցնում խնկամանի մեջ, զգուշորեն վառում լուցկին: Մինչ առավոտվա քամին սփռում է խնկի անուշավուն հեղձուկ բույրը, Մետաքսյան տեղավորվում է ցածրիկ նստարանին ու ձեռքերը ծնկներին դրած՝ նայում հորիզոնին: Այնտեղ՝ հեռավոր կոր բլրից անդին է մնացել ամուսնու գերեզմանը. ոչ գոռգոռոցդ տեղ կհասնի, ոչ էլ թռչել-հասնել կլինի: Ո՞ւմ մտքով կանցներ,

որ իրեն բաժին հասած երջանկությունն այդքան կարճատև կլինի: Նա մեծացել էր սիրագորով ընտանիքում հոր, մոր ու երեք ավագ եղբայրների հետ: Ամուսնական կյանքի մասին չէր էլ երազում. արտաքինի հարցում բախտը չէր բերել՝ մեծաքիթ, շիլ աչքով ու անշրթունք բերանով: Հաշտվելով միայնակի իր ճակատագրի հետ՝ նա խնամում էր զարմիկներին, որոնց համար խելքը գնում էր: Բայց քառասունը լրանալուն պես անսպասելիորեն ամուսնացավ Ռազմիկի հոր հետ: Տեղափոխվեց սահմանի մյուս կողմը՝ նրա հայրենի Օմարբեյլի, որտեղ յոթանասուն ադրբեջանցի ընտանիքի մեջ հինգ հայկական ընտանիք էր ապրում: Ռազմիկը տասներեք տարեկան էր. դժվար, փշոտ տարիք էր, հայրը չէր կարողանում գլուխ հանել նրանից: Գյուղում խղճում էին նրան՝ խեղճ որբին. հերիք չէր՝ մորը կորցրեց, հայրն էլ համարյա տեղնուտեղը ուրիշ կնոջ հետ ամուսնացավ: Ո՞վ է նման բան տեսել, որ խորթ մայրը գժվի խորթ որդու համար: Իր սեփական երեխան ունենա թե չէ, կսկսի տղայի կյանքն ուտել: Մետաքսյան խոսակցությունները բանի տեղ չէր դնում, բայց հոգու խորքում ինքն էլ էր վախենում, որ իր երեխային լույս աշխարհ բերելուն պես Ռազմիկից երես կթեքի: Դրա համար էդպես էլ չհղիացավ: Չորս տարի անց ամուսինը հոգին ավանդեց. մահացավ կեսգիշերին սրտի կանգից: Գոռաց վայրի ցավից, կռացավ, արմունկով դիպավ կնոջն ու լռեց: Ռազմիկը կտրականապես հրաժարվեց Հայաստան տեղափոխվելուց, թեև Մետաքսյան շատ էր խնդրում: «Գնամ, որ ինչ, բա դպրոցը, ավարտական դասարան եմ, չէ՞»,– վրդովվում էր նա: Մետաքսյան տեղի տվեց, բայց ստիպեց, որ խոստանա՝ կտեղափոխվեն, երբ նա ինստիտուտ ընդունվի: Ռազմիկը

համաձայնեց, բայց պայմանով, որ իր ծնողների գերեզմանը կտեղափոխի Բերդ: Մետաքսյան խիստ վիրավորված էր. ոնց կարող էիր մտածել, որ նրանց այստեղ կթողնեմ: Տղան գրկեց նրան ու լաց եղավ: Այդ օրվանից սկսեց «Երկրորդ մայր» անվանել նրան: Երբեմն պարզապես՝ «Երկրորդ»: Ինքն էլ կատակի տվեց ու նրան անվանեց «Առաջին»: Այդպես էլ ապրում էին՝ իրար «Առաջին», «Երկրորդ» դիմելով:

Երբ պատերազմը սկսվեց, սահմանամերձ գյուղերում առանձնապես չանհանգստացան. մարդիկ տասնամյակներ շարունակ բարեկամություն էին անում ընտանիքներով, միմյանց հյուր էին գնում: Պատերազմն ինչ-որ տեղ հեռվում է, մեզ չի վերաբերի, չէին կասկածում նրանք: Տա Աստված, համաձայնում էր Մետաքսյան: Դրա համար էլ հանգիստ սրտով մեկնեց հիվանդ մորը տեսնելու: Մի քիչ ուտելիք սարքեց, հարևանուհուն էլ խնդրեց լվացքի պարանից շորերը հավաքել. Ռազմիկը, միևնույն է, կմոռանա: Ուշ գիշերը լուր եկավ, որ Օմարբեյլիում անհանգիստ վիճակ է. սահմանից կրակոցներ են լսվել, ու երևում է՝ մի քանի տուն է այրվում: Միայն երկու օր անց հաջողվեց հասնել այնտեղ: Տունը կանգուն էր՝ բոլորովին անվնաս, միայն դարպասն էր ծռվել ինչ-որ ծանր բանի հարվածից: Մետաքսյան մատները սահեցրեց ծռվածքի երկայնքով՝ շփոթված զգալով ծռմռված մետաղի մակերեսի ճանկռտող հպումը: Լվացքի պարանից կախված էր ցամաքած, կոշտացած սպիտակեղենը: Տունն այն աստիճան լուռ էր, որ լսելի էին սեփական սրտիդ զարկերը: Ռազմիկը ոչ մի տեղ չկար, բայց նրան գտավ. հետնաբակում էր՝ վրան փութանակի հողի կույտեր ու այգեգործական գործիքներ լցված: Մետաքսյան նրա դեմքից հավաքեց հողն ու պահեց բռում: Իր արածին հաշիվ

չտալով՝ նա մի բուռ հող կերավ՝ խեղդվելով զարհուրանքից ու ցավից, մնացած հողը լցրեց ծոցը: Հետո կպցրեց վառարանն ու ջուր դրեց՝ տաքանա: Նկուղից մի մեծ տաշտ հանեց, որի մեջ բուրդն էր թրջում: Ռազմիկին դրեց մեջը: Լողացրեց նրան զգուշորեն, շունչը պահած, ասես վախենում էր արթնացնել: Գլխի ընկնելով, որ նախկինում նրան երբեք մերկ չէր տեսել, սկսեց շշուկով խոսել՝ թաքցնելով շփոթմունքը. «Ինչ բարեկազմ ես, տղա՛ս: Ինչ սիրուն մարմին ունես: Ամեն ինչդ էլ լավն է՝ կյանքի, ուրախության, երջանիկ լինելուդ համար: Եթե փորիդ վերքը չլիներ... բայց ես կվիրակապեմ, որ գեղեցկությունդ չփչացնի: Ես քեզ կհագցնեմ դպրոցի ավարտական երեկոյիդ համար գնած կոստյումը: Հետ կսանրեմ անհնազանդ մազերդ. դու երբեք չէիր թողնում, գլուխդ փախցնում էիր, ծամածռություններ անում՝ մի՛ կպիր սանրվածքիս, սենց էլ վատ չէ: Դու բարձր, մաքուր ճակատ ունես ու չէիր ուզում՝ ճակատդ բաց լինի...»:

Ստիպված հրաժարվեց կոշիկներից, փշրված ոտքերին հագցնել չէր լինում: «Ա՛խր, կարող էին գոնե էնպես սպանել, որ մարդ չտառապեր: Տանջամահ անելս ո՞րն է»,– շշնջում էր Մետաքսյան՝ սրբիչով փաթաթելով Ռազմիկի ոտնաթաթերը: Գոմից հանեց սայլը, մեջը փափուկ շալ փռեց, Ռազմիկին տեղավորեց սայլում ու գլորելով հանեց բակից: Հարևան տները նրան խուլ լռությամբ ճանապարհ դրեցին: Մետաքսյան ոչ մի անգամ չշրջվեց, որ հրաժեշտի հայացքի արժանացնի: Նրանց ասելու բան չուներ:

Քամու պոռթկումն իր հետ բերեց սոճու ասեղների սուր հոտն ու հեղեղից արթնացած գետի հեռավոր ձայնը: Արևը, հազիվ երևալով Աղջկասարի հետևից, վերից վար ոսկեզօծեց

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark